

# ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

---

*Վերջապէս հասաւ մայիսի* 5*-ը։ Ազգի և Եկեղեցու մի տարուայ երկունքը ունեցաւ ամենաբարեյաջող ծնունդ։ Համազգային ժողովը կատարեալ կարգապահութեամբ, գիտակցական միաբանութեամբ և գործի ծանրութեանը արժանավայել լրջութեամբ ընտրեց միաձայն* 72 *քուէով* ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑՈՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ։ *Իսկ երկրորդ ընտրելի* 50 *սպիտակ և* 22 *սեւ քուէ ստացաւ* ԳԵՐԱՊԱՏԻՒ ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ։

Որչա՜փ մեծ է ընդհանուր ոգևորութիւնը, այնչափ զօրեղ է ընդհանուր հրճուանքը, որ մենք չենք կարող գտնել մի որ և է արտայայտիչ խօսք գոնէ մօտաւորապէս այդ զգացումների վեհումը արտայայտելու:

Ամբողջ Հայ Ազգը, ամենահին Քրիստոնէական Եկեղեցին, մնում է այժմս ակնապիշ դէպի մեր ՄԵԾԱԶՕՐ ԵՒ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍՐ՚Ն ՈՒ ԹԱԳԱՒՈՐԸ, Որի բարեհաճութիւնն է տալու մեր բոլոր իղձերի կատարումն:

«Արարատի» Պաշտօնական և Ազգային մասերում կգտնենք հետզհետէ այս ՄԵԾ ԳՈՐԾԻ՚Ն վերաբերեալ բոլոր պաշտօնական վաւերաթղթերն ու կատարուած իրողութեանց նկարագիրների քաղուածքը:

ՄԻԱԲԱՆ.